

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ 2014-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

(Ծրագրի 10-րդ գլուխ)

ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐՈՒՄ ԲՆԱԿԶՈՒԹՅԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

10.1. ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐ

ՀԻՄՆԱԽԵՆԴԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆԵՐԿԱ ՎԻՃԱԿԸ

637. ՀՀ Լոռու մարզի տարածքն այժմ է ընկնում իր բարդ լեռնային ռելիեֆով, բնական վտանգների տեսակներով՝ ուժեղ երկրաշարժեր, սողանքներ, փլուզումներ, սելավներ, ջրհեղեղներ, ցրտահարություն, ուժեղ քամիներ և շանթահարում, երաշտ, հորդառատ անձրևներ, կարկուտներ և մի շարք օդերևութաբանական և ագրոօդերևութաբանական երևույթներ: Եվ ծավալով, և դրսևորման հաճախականությամբ առավել ծանր տարերային աղետներից մեկը երկրաշարժներն են: Նրանք կարող են ծագել անսպասելի, որոնց ժամանակը և գտնվելու տեղը դժվար է կանխատեսել և առավել ևս բարդ կամ անհնարի է կասեցնել երևույթի աճն ու զարգացումը, կարող են առաջացնել նաև խոցման երկրորդային գործոններ:

10.1.1. Սողանքների տեսանկյունից վտանգավոր տարածքներ

638. Լոռու մարզում սողանքային երևույթների ազդեցության տակ է գտնվում շուրջ 1900 հա տարածք: Մարզի մոտ 18 բնակավայրերում դիտարկվում է սողանքային երևույթների ակտիվացում, ստեղծելով աղետավտանգ պայմաններ բնակչության համար: Սողանքները մարզի այն վայրերում են, որտեղ կան գառիկող 19 աստիճան և ավելի թեքության լանջեր, որտեղ խախտված է ապարազանգվածի հավասարակշռությունը: Դրապատճառներն են՝ հոսող ջրերը, ապարների հողմնահարումը կամ տեղումներից և գետնաջրերից գերխոնավացումը, ինչպես նաև երկրաշարժը, մարդու տնտեսական գործունեությունը, երբ հաշվի չի առնվել տեղանքի երկրաբանական պայմանները, անտառահատումը:

639. Սողանքների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ նրանց ցիկլային կրկնման ժամանակամիջոցը միմիանցից էապես տարբերվում են մի քանի տարով: Դա կախված է սողանք առաջացնող պատճառների կուտակման հզորություններից և ապարների ամրություններից: Սովորաբար սողանք առաջացանում է այնտեղ, ուր գետի խորքում գտնվող կավերը գերխոնավանում և դառնում են լարծուն՝ այնտեղ թափանցած տեղումների ջրերից, որի հետևանքով լանջի թեքությամբ սահում են ցած: Նրանք վիթխարի զանգվածով փլվում են ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների վրա, ավերում են բնակավայրեր, ոչնչացնում են անտառներ և փափուկ գետերի հունը՝ փոխելով այն, իրենց տակ թաղում են մարդկանց ու անասուններին: Սողանքների հնարավոր հետևանքները կլինեն Վանաձոր-Ալավերդի ավտոմայրուղու Փամբակի և Սանահինի հատվածների, ինչպես նաև Այրում-Վանաձոր երկաթուղու Քոբերի հատվածի մի քանի օրով շարքից դուրս գալը:

640. Վանաձոր քաղաքի հարավային կողմում, Փամբակ լեռնաշղթայի հյուսիսային լանջին առկա են սողանքավտանգ տեղամասեր, որոնք ձգվում են քաղաքի ամբողջ երկայնքով մեկ, Բարեկամություն, Հակոբյան, Բուսաբանական և Ֆիդայիների փողոցների վերևում: Քաղաքից «Մայմեխ» սար տանող ճանապարհի 9-րդ կմ-ին հարակից արևմտյան կողմում գտնվող 50-60⁰ թեքություն ունեցող լանջի վրա նույնպես առկա է սողանքավտանգ հատված՝ 80x30 մ չափերով: Վանաձորը շրջապատված է մոտ 450 հա անտառապատ լանջերով, որոնց անտառային ծածկույթը վերջին տարիներին խիստ տուժել է անօրինական ծառահատումներից՝ առաջացնելով սողանքի նախապայման: Լանջերը բանջարանոցների վերածելու պատճառով սողանքավտանգ տեղամասերը ցույց են տալիս ակտիվության նշաններ: Ակնադիտական ուսումնասիրությամբ նկատվել են հողի ուռչում լանջերի հիմքերի մոտ, սողամասերում առաջացել են փոսեր, թեքվել են ցանկապատերն ու ծառերը: Վտանգավոր ստորոտին տեղաբաշխված են 1-2 հարկանի սեփական տներով կառուցապատված ամբողջ թաղամասեր: Սողանքների ակտիվացումը կանխելու համար անհրաժեշտ է.

- կատարել մասնագիտական խորը գործիքային ուսումնասիրություն,
- սողանքավտանգ լանջերին տնկել արագ աճող և շատ ջուր կլանող ծառատեսակներ,
- արգելել նոր հողակտորները բանջարանոցների վերածելու գործընթացը,
- կարգավորել ոռոգման աշխատանքները օգտագործվող բանջարանոցներում:

641. Շահումյան գյուղի հարավ-արևելյան մասում, Փամբակ լեռնաշղթայի հյուսիսային լանջին առկա է սողանքային տեղամաս՝ 100x80 մ, մոտ 0,8 հա մակերեսով: Վտանգավոր հատվածում գտնվում է «Ալթայ» կոչվող թաղամասը 1-2 հարկանի 20 սեփական տներով: Սողանքային մարմինը լեզվի մասում տեղաշարժվել է 6-7մ, երևում են լայնական ճեղքեր:

Սողանքի առաջացմանը նպաստում են գրունտային ջրերը, որոնք ակտիվանում են ձնհալից և տեղումներից: Հնարավոր աղետը կանխելու համար անհրաժեշտ է.

- սողանքի մարմնի վրա տեղադրել «մայակներ» և կատարել պարբերաբար դիտարկումներ,
- ուշադիր լինել շենք-շինություններում առաջացող ճաքերի նկատմամբ, հետևել դրանց չափերի փոփոխությանը և ուղղվածությանը,
- ուժեղացնել հսկողությունը սողանքավտանգ տարածքի նկատմամբ և երևույթի ակտիվացման նշաններ հայտնաբերելու դեպքում անմիջապես ահազանգել Լոռու մարզային փրկարարական վարչություն;
- ձեռնարկել անհետաձգելի միջոցառումներ, նշված տարածքում ջրահեռացման ռեժիմը կարգավորելու համար՝ առաջին հերթին արագ աճող և շատ ջուր կլանող ծառատնկումների միջոցով:

642. Կաճաճկուտ գյուղի սողանքավտանգ տարածքը ներկայացված է երկու սողանքային լեզվակներով ու զբաղեցնում է մոտ 450 հա մակերես: Այստեղ առանձնացվում են մոտ երկու տասնյակ խոշոր և փոքր սողանքային մարմիններ, որոնցից մեծ մասը ներկայումս ակտիվ են ու անընդհատ շարունակում են զարգանալ: Գյուղի վտանգավոր երկրաբանական երևույթների զարգացման տարածքը ունի մոտ 1800 մ երկարություն, 350-1200 մ լայնություն և զբաղեցնում է մոտ 160 հա մակերես, ընդ որում մեծ մասը ընդգրկում է անմիջականորեն գյուղի տարածքը: Ներկայումս նույնպես նկատվում են սողանքի ակտիվության նշաններ՝ ըստ տեղի բնակիչների՝ մեծանում են շենք-շինություններում նկատված ճեղքերը: Գյուղի տարածքում կատարված հետազոտություններից ստացված տվյալների վերլուծությունը և ամփոփման արդյունքները ցույց են տալիս.

- Կաճաճկուտ գյուղի սողանքային տարածքը հանդիսանում է ֆիզիկաերկրաբանական երևույթների համակարգ, որը ներկայացված է տարատեսակ վտանգներով (սողանքներ, նստեցումներ, փլուզումներ, մակերեսային ճեղքեր);
- նշված համալիրը, որոնցից առավել տարածված են ու ակտիվ են սողանքները և մակերեսային սողանքային ճեղքերը, ձևավորվել են երկու շլեյֆների (լեզվակների) միացման հանգույցում՝ Կաճաճկուտ գյուղի տեղամասում և նրա շրջակայքում;
- գյուղի սողանքային տեղամասը զբաղեցնում է մոտ 140 հա տարածք, որտեղ առանձնացված են մոտ 2 տասնյակ սողանքային մարմիններ՝ 0,015 հա մինչև 1,5-1,8 հա և տասնյակից ավել սողանքային ճեղքեր, այդ թվում խոշոր ռեգիոնալ ճեղք՝ մոտ 1400 մ երկարությամբ ու 0,4-5 մ լայնությամբ;
- սողանքային մարմիններից 15-ը և մակերևութային ճեղքերի մեծ մասը ներկայումս շարունակում են զարգանալ, չափազանց ակտիվ են ու լուրջ սպառնալիք են ներկայացնում գյուղի նորմալ կենսագործունեությանը, կարող են առաջացնել մարդկային և սոցիալ-տնտեսական կորուստներ;
- ուսումնասիրված տարածքում սողանքային պրոցեսների անբարենպաստ պատճառներն են բնական և անտրոպոգեն գործոնները;
- սողանքային գոտում գտնվում են թվով 16 բնակելի մենատներ, որոնք ենթարկվում են ձևափոխումների և քայքայման: Առավել անբարենպաստ են գյուղի հյուսիսային, արևմտյան և հարավ-արևելյան ծայրամասերը, որոնք գտնվում են դանդաղ սահող կավային գրունտների տիրույթում:

Հակասողանքային միջոցառումների շարքում առավել արդյունավետ են համարվում.

- ստորգետնյա ցամաքորդային ստորասարահների կառուցումը գյուղի հյուսիսային և հարավային մասերում;

- հատակային և կողային էռոզիայի և դրա հետևանքների կանխարգելման նպատակով հարկավոր է նախատեսել Կաճաճկուտ գետի և նրա վտակների ջրերի տարանցումը գյուղի տարածքում բետոնե ջրհորդանների, կամ բետոնապատված լանջառունների միջոցով;
- անհրաժեշտ է կարգավորել ոռոգման ջրերի օգտագործումը անմիջապես գյուղի տարածքի սահմաններում;
- անհրաժեշտ է աղբյուրակապել տվյալ տարածքի առավել մեծ ջրի ծախսունեցող բնական աղբյուրները:

643. Օձուն գյուղի սողանքային տեղամասը գտնվում է Դեբեդ գետի ձախ ափին՝ Օձունի սարահարթի արևելյան եզրից մինչև գետի ողողահունն ընկած լանջի հատվածում: Սողանքային մարմնի երկրաչափական բնութագրիչներն են՝ երկարությունը 300մ, լայնությունը 250մ, մակերեսը մոտ 70 հա, սողանքային մակերեսի միջին թեքությունը մոտ 30-35⁰: Ներկայումս սողանքը շարունակում է դրսևորել անընդհատ աճող ակտիվության ակնառու նախանշաններ և բնութագրվում է սողանքային վտանգի բարձր աստիճանով: Այդ զանգվածում նկատվում են նոր տեղաշարժեր, որը կարող է ավիրել սողանքի ճակատային մասով անցնող ավտոմայրուղին և երկաթգիծը: Օձունի տեղամասում ներկայումս ընթացող պրոցեսների մեղմացման և կայունացման համար անհրաժեշտ է.

- Օձուն գյուղից կենցաղային և ոռոգման ջրթողման ամբողջական արգելում,
- սողանքին կից տարածքների մասնավոր հողակտորների ոռոգման խիստ հսկողություն,
- ավտոճանապարհի երկայնքով ձգվող ստորին սկարպի չորացում, այստեղ բեռնաթափվող ստորգետնյա ջրերի հեռացում դեպի Դեբեդ,
- հին և քայքայված ցամաքուղային ցանցի ցինկապատ խողովակների փոխարինում նորով և նրա պահպանման և գործառականության մշտական վերահսկում,
- սողանքի գրունտների մեջ մթնոլորտային տեղումների ինտենսիվ ներթափանցումը կանխելու նպատակով խոշոր ճեղքերի լցափակում և տոփանում,
- ստորին սկարպի հիմքում ավտոճանապարհի պաստառի երկայնքով բետոնյա խոշոր բլոկների տեղադրում:

644. Դսեղ գյուղի մոտ գտնվող «Տախտեր» կոչվող տեղանքում առկա սողանքային հատվածը, հարկավոր է ընդգրկել համալիր ծրագրում նախնական հետազննման և մոնիտորինգի իրականացման համար, հետագա հակասողանքային ինժեներապաշտպան միջոցառումների հիմնավորման և իրականացման նպատակով: Համայնքի Վանաձոր-Ալավերդի ավտոմայրուղու 30-րդ կմ-ի հյուսիսային մասում՝ 300մ հեռավորության վրա, Դսեղ համայնքի հարավային մասում գտնվում է 500 մ երկարությամբ և 50 մ լայնությամբ սողանքային գոտի, որը ունի մոտ 30⁰ լանջի թեքություն և 3 մ խորություն: Սողանքավտանգ գոտուց 10 մ հեռավորությամբ դեպի արևելք՝ ձորակով հոսում են գյուղի հյուսիս-արևելյան հատվածում գտնվող չվերահսկվող բնական գրունտային և մակերեսային, ինչպես նաև գյուղի կենցաղային ջրերը, որոնց բարձրադիր սարահարթից վարնետքի տեղամասը գտնվում է մշտական ջրահագեցած վիճակում:

Հնարավոր աղետը կանխելու համար անհրաժեշտ է .

- գյուղի տարածքի կենցաղային և այլ հոսող ջրերի ներհոսքը դեպի վտանգավոր տեղամաս կանխելու համար նախատեսել բետոնե ջրհորդաններ, կամ բետոնապատված լանջառուններ,
- պատնեշել Վանաձոր-Ալավերդի ավտոմայրուղու և երկաթգծի աջակողմյան հատվածը,

- սողանքավտանգ տարածքում արգելել բանջարաբուստանային կուլտուրաների մշակումը, ինչպես նաև այդ տեղամասի օգտագործումը որպես արոտավայր:

645. Վահագնի-Անտառամուտ ճանապարհի հատվածը՝ 40-50 մ երկարությամբ գտնվում է ակտիվ սողանքային մարմնի վրա, որի շարժման հետևանքով ճանապարհը գտնվում է վթարային վիճակում: Ասվալտի շերտի վրա առկա են ճաքեր և նստվածքներ: Սողանքի առաջացմանը նպաստում են նրա տակ մտնող գրունտային ջրերը: Առաջարկվում է կատարել հետևյալ միջոցառումները.

- փակել կամ սահմանափակել գրունտային ջրերի մուտքը սողանքային մարմին;
- բեռնաթափել սողանքային մարմնի ճանապարհին հարող սողանքածին բլրակը, նրանից հատելով մինչև 3 մ հատված:

646. Մարզի Գուգարք, Ձորագետ, Մարց, Մեծ Պարնի, Բլագոդարնոյե, Գյուլագարակ, Գարգառ, Սարատովկա, Կուրթան, Ջրաշեն, Անտառամուտ, Վահագնի, Հալլավար, Ձորագյուղ համայնքներում, ինչպես նաև Վանաձոր-Ստեփանավան, Վանաձոր-Վահագնի, Արջուտ-Շիրակամուտ, Դեբեդ-Ձորագետ, Կուրթան-Մարց, Թումանյան-Մարց և Ձորագետ-Ձորագյուղ ավտոճանապարհների առանձին հատվածներում նույնպես նկատվել են սողանքային երևույթներ տարբեր ժամանակաշրջաններում:

10.1.2. Քարաթափումների, փլուզումների, նստվածքային երևույթների օջախներ

647. Քարաթափումների, փլուզումների, նստվածքային երևույթների առաջացումը հիմնականում կապված են երկրաբանական էկզոգեն պրոցեսների հետ՝ մթնոլորտային երևույթների ազդեցությունը, երկրակեղևի տեկտոնիկ շարժումը, անտրոպոգեն գործունեությունը և այլ գործոնները, որոնք նպաստում են ապարների քայքայմանը, ջրակալմանը ու լվացմանը և բերում են երկրի մակերեսի և վերին շերտերի անկանխատեսելի փոփոխությունների:

648. Վանաձոր քաղաքի հյուսիսային կողմում, Բազում լեռնաշղթայի հարավային լանջին առկա են քարաթափման վտանգավոր տեղամասեր: Վտանգավոր հատվածում՝ Նարեկացի փողոցի երկայնքով մեկ կառուցված են բնակելի 1-2 հարկանի տներ: Քարքարոտ բարձրունքի ակնադիտական ուսումնասիրությունը ցույց տալիս, որ երկար տարիների հողմահարումից ժայռը քայքայվել է, առկա է ամենօրյա վտանգ և ավելի մեծ քարակտորների գլորման հնարավորություն դեպի բնականոցված:

649. Շահումյան գյուղի հարավ-արևմտյան մասում, 2-րդ փողոցի վերևում, Փամբակ լեռնաշղթայի հյուսիսային քարքարոտ լանջին առկա է քարաթափման վտանգավոր տեղամաս, որտեղ կառուցված են 1-2 հարկանի բնակելի տներ:

650. Փամբակ համայնքի Վանաձոր-Ալավերդի ավտոմայրուղու 6-րդ կմ-ի 50գծմ հատվածն անցնում է մեծ եռանդի տակով, որը պարբերաբար սողանքների և սելավաջրերի հետևանքով քարաթափ է լինում՝ պայման ստեղծելով մայրուղու տակ գտնվող խոշոր քարաբեկորների շարժմանը, որոնք վտանգ են սպառնում ձորում գտնվող շինություններին և բնակչությանը: Լանջի թեքությունը մոտ 30°, լայնությունը՝ մոտ 50 մ:

651. Նեղոց գյուղի հարավ-արևմտյան թաղամասի ճանապարհի աջ մասում գտնվող բնակելի տներից 2-4 մ հեռավորությամբ տնամերձ հողամասերում և տներից մինչև ժայռն ընկած են անկանոն տարբեր չափսերի ժայռաբեկորներ: Խոշոր քարաբեկորները թափվել են տներից մոտ 50-70մ բարձրության գտնվող ժայռերից: Սակայն ժայռի վրա երևացող ինչպես նոր քարաթափված հատվածներում, այնպես էլ 150-170 մ երկարությամբ ձգվող լեռնաշղթայի հատվածում առկա է քարաթափման վտանգը, որը անկանխատեսելի հետևանքներով սպառնում է ժայռի ստորոտում տեղակայված 4 բնակելի տներին և նրանց բնակիչներին:

652. Թումանյան քաղաքի 3-րդ թաղամասում, ինչպես նաև Վանաձոր-Ալավերդի-Բագրատաշեն, Վանաձոր-Դարպաս ավտոճանապարհների տարբեր հատվածներում և Պուշկինի լեռնանցքի առաջին շրջադարձի մոտ տարբեր ժամանակներում նույնպես նկատվել են քարաթափման երևույթներ:

653. Օձուն-Ալավերդի ավտոճանապարհ ժայռաբեկորների ճեղքերը իրարից հեռացել են (ծնհալի և անձրևաջրերի պատճառով) և վտանգ են ներկայացնում ճանապարհի երթևեկությանը: Առավել վտանգավոր հատվածը գտնվում է Վանաձոր-Ալավերդի մայրուղուց դեպի Օձուն գյուղ բարձրացող ոլորապտույտ ճանապարհի վերջիում, 2,8 կմ հեռավորության վրա, որը անցնում է ժայռի տակով մոտ 260 մ երկարությամբ, ժայռից առավել վտանգավոր տեղամասը՝ 30 մ երկարությամբ, 15-22 մ բարձրությամբ հատված է, որում կան տարբեր չափսերի քարեր, որոնք ճեղքերի ձևով առանձնացված են հիմնական ժայռից, հենման մակերեսը խարխված է: Լանջի բնութագրիչներն են՝ թեքությունը - 90°, բարձրությունը - 15-22 մ, երկարությունը - 260 մ. տեղաշարժված և ոչ կայուն քարաբեկորների ծավալը - 3500 մ³: Ազդեցության գոտում գտնվող բլեկտներն են՝ Վանաձոր-Ալավերդի միջպետական ավտոճանապարհ (հեռավորությունը - 150 մ), երկաթուղի (հեռավորությունը - 250 մ):

654. Հետագա վտանգներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է համապատասխան մասնագիտացված ծառայությունների ուսումնասիրություններ կատարել: Հնարավոր քարաթափումները կանխելու համար անհրաժեշտ է.

1. խիստ ճեղքավորված ժայռային լանջի վնասագերծման նպատակով կառուցել պողպատե ճոպաններով ամրացված մետաղացանցային թիկնոցներ;
2. վտանգավոր տեղամասերի նախապես զգուշացված բնակիչներին ժամանակավորապես տեղափոխել այլ կացարաններ;
3. լցոնափակել խոշոր քարաբեկորների ճաքերն ու արանքները:
4. պոտենցիալ վտանգ ներկայացնող, կախված մեծ ժայռաբեկորները հեռացնել մասնատելով;
5. կարգավորել ավտոմայրուղու վերևում գտնվող բնակչության կենցաղային և ոռոգման ջրերի համակարգը,
6. կառուցել ցամաքորդներ՝ ճանապարհի տակից ջուրը հեռացնելու համար:

10.1.3. Լոռու մարզի տարածքում ջրհեղեղների (սելավների) վերաբերյալ կանխարգելիչ միջոցառումներ

655. Լոռու մարզում սելավային հոսքերն առաջանում են Բազումի և Փամբակի լեռնաշղթաների հարավային, Լավար ու Լեջան լեռների հարավային և արևմտյան լանջերի ձորակներում: Ընդհանուր առմամբ Դեբեդ գետում առավելագույն ծախսերաղետային հետևանքներով կրկնվում են 8-10 տարին մեկ անգամ: Սելավների օջախը գտնվում է Բազումի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 2400 -2500 մ բարձրությունների վրա:

656. Ձորագետի ավազանի սելավները հիմնականում ցեխաքարային տիպի են, բացի Ուռուտ վտակից, որը ցեխային է: Առավել ակտիվությամբ առանձնանում են Ուռուտ, Ագարակ, Լեջան, Կողես սելավները: Միջին ակտիվություն ունի Գարգառ գետակը, որը սակայն աչքի է ընկնում սելավների մեծ տևողությամբ և ուժգնությամբ: Սելավների օջախը գտնվում է Բազումի լեռնաշղթայի հյուսիսային լանջերին՝ 2400-2500 մ բարձրությունների վրա:

657. Մարզի տարածքի մի շարք փոքր վտակներ սելավաբեր են և երբեմն աղետների պատճառ են դառնում: Այստեղ սելավներն առաջանում են ոչ միայն հորդառատ և տեղատարափ անձրևների պատճառով, որոնք ունեն տեղական ծագում, այլ նաև երկարատև, միմյանց հաջորդող ճակատային անձրևներից, երբ հողագրունտները հագեցած են խոնավությամբ և հոսքի գործակիցը մեծ է: Սելավային երևույթները զարգացած են գրեթե ամենուրեք՝ Փամբակի, Ձորագետի և բուն Դեբեդի ավազաններում՝ հիմնականում 1800-

2800 մ բարձրություններում: Այս գոտում էլ տեղաբաշխված են սելավային օջախների գերակշիռ մասը, որոնք ոչ միայն բնական տարատեսակ գործոնների (ապարների լիթոլոգիական առանձնահատկությունների, ռելիեֆի տեղագրական պայմանների, հողերի և բուսածածկույթի) ազդեցության, այլ նաև վերջին տասնամյակներին մարզի լանդշաֆտների անթրոպոգենփոփոխության՝ հիմնականում անտառահատումների արդյունքն են: Սելավային օջախների առաջացմանը և զարգացմանը նպաստում են նաև մարզում լեռնահանքային արդյունաբերության և գյուղատնտեսության զարգացումը:

658. Ուժեղ սելավաբեր են Բազումի, Գուգարաց, Լավարի և Լեջանի լեռների հարավային և հարավահայաց խիտ և խորը մասնատված, թույլ բուսապատված և չոր լեռնալանջերին տեղաբաշխված գետաավազանները, որտեղ սելավ առաջացնող ակտիվ մակերեսները զբաղեցնում են տարածքի 30-50% և ավելի:

659. Ագարակ, Լեջան, Կողես, Հաքորի, Կաճաճկուտ և Ալավերդի գետակների բարձր սելավաբերությունը կապված է ոչ միայն այստեղ անտառային տարածքների խիտ կրճատման, այլ նաև լեռնահանքային արդյունաբերության զարգացմանը զուգընթաց սելավային օջախների ձևավորման հետ:

660. Փամբակի ավազանում խիտ սելավաբեր են Շենավան, Օձի ձոր, Քարածոր գետերի ավազանները, ինչպես նաև Արջուտի սելավային հոսքը: Սելավաբերության բարձր աստիճանով աչքի են ընկնում նաև Փամբակի աջակողմյան՝ Լեռնանցքի և Լերմոնտովոյի սելավաբեր հոսքերը:

661. Մարզի տարածքում սելավները ըստ ընդգրկման չափերի գրանցվել են լոկալ, իսկ տևողությամբ՝ կարճաժամկետ: Հիմնականում ըստ իրենց պատճառած վնասի և խորտակման տարածքի մարզին բնորոշ է փոքր ջրհեղեղներ (5-10 տարին մեկ, ջրով ծածկվում ենցածր դիրքում տեղակայված տարածքների 10%-ից ոչ ավելին, նշանակալի նյութական վնասներ և զոհեր չեն լինում):

662. Հորդացումները տեղի են ունենում առավելապես գարնանը և ամռան սկզբին ապրիլ-հունիս՝ կապված ձնհալքի և մթնոլորտային առատ տեղումների հետ: Նվազագույն մակարդակները դիտվում են ամռան երկրորդ կեսին և ձմռանը: Աշնանը դիտվում է հորդացման երկրորդ փոքր փուլը:

663. Այսպիսով՝ Լոռու մարզը բնութագրվում է միջին ակտիվության սելավների մեծ տարածվածությամբ, որոնց վերջին տասնամյակների մեծ ակտիվությունը բացատրվում է մարզում անտառային զանգվածների խիտ կրճատման և լեռնալանջերի լերկացման հետ: Մարզի տարածքում սելավային երևույթների դեմ պայքարի ամենաարդյունավետ միջոցների թվին են պատկանում սելավաբեր գետաավազանների լեռնալանջերի անտառային մակերեսների վերականգնումն ու զարգացումը, ինչպես նաև ջրատեխնիկական ժամանակակից ճարտարագիտական միջոցառումների իրականացումը:

664. Գարնանային ջրհեղեղների, հեղեղումների և սելավների կանխարգելման նպատակով անհրաժեշտ է.

- Ուսումնասիրել և գնահատել գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը:
- Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան թմբերն ամրացնելու համար: Տեղական ինքնակառավարման մարմինների միջոցով և օժանդակությամբ ներգրավել լքնակշռությանը գյուղի տարածքով հոսող գետերի հունների, հակահեղեղային կառույցների և սելավատարների մաքրմանը կենցաղային, շինարարական և այլ բերվածքային աղբակույտերից:

- Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանք՝ ջրաճածկման, հեղեղավտանգ և սելավավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար:
- Ուժեղացնել հսկողությունը գետերի ջրի մակարդակի բարձրացման, օդի ջերմաստիճանի և ճնշման փոփոխությունների նկատմամբ: Մարտ-սեպտեմբեր ամիսներին հետևել «Հայիդրոմետի» տեղեկագրի կանխատեսումներին և լեռնային գյուղերում բնակիչների ուժերով սահմանել հերթապահություն՝ ապահովելու տեղեկատվությունը՝ կազմավորվող վտանգների մասին:
- Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին:
- Պատրաստ վիճակի բերել տարածքային և համայնքային համահավաք փրկարար ջրկատները, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով:
- Նախապատրաստել միջոցներ՝ հարկ եղած դեպքում տուժածներին առաջին բուժօգնություն և բժշկական օգնություն ցույց տալու, անհրաժեշտության դեպքում ստացիոնար բուժում կատարելու համար:

665. Ստորև բերվում է տեղեկատվություն Լոռու մարզի տարածքում հնարավոր հեղեղումների, հեղեղավտանգ հատվածների և կանխարգելիչ միջոցառումների ծավալների վերաբերյալ.

ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԳԵՏԵՐԻ ՀՈՒՆԵՐԻ, ՍԵԼԱՎԱՏԱՐՆԵՐԻ, ՀԵՂԵՂԱՎՏԱՆԳ ՀԱՏՎԱԾՆԵՐԸ և ԿԱՆԽԱՐԳԵԼԻԶ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հ/հ	Համայնքի անվանումը	Վտանգավոր տեղամասի գտնվելու վայրը	Վտանգավոր տեղամասի նկարագրությունը, գտնվող շենքերի, շինությունների և բնակչության թիվը	Կանխարգելիչ միջոցառումների առաջարկություններ համայնքների ղեկավարների կողմից
1	2	3	4	5
Գուգարքի տարածաշրջան				
1.	Վանաձոր	1.Խնձորուտ 5-րդ, 6-րդ փողոցներ 2.Ս. Պետերբուրգի փողոց «Տանձուտ» գետի շրջակայքի տները և հողամասերը	1.Վնասում է կապը, կոյուղին, այգիները, ջրատարները, տները, շենքերը 2. Վնասում է կապը, կոյուղին, այգիները, ջրատարները, տները, բանջարանոցները	1.Մաքրել գետերի հունները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: 2. Մաքրել հակահեղեղային կառույցները և սելավատարները
2.	Ձորագյուղ	Ձորագետ գետի հենապատի փլուզում ճալա կոչվող այգիների հատվածում:	Մոտ 100մ հենապատը փլված է, ջուրը մշտապես մուտք է գործում այգիներ, վտանգավոր գոտում շենք-շինություններ չկան:	Մինչև գարնանային վարարումները անհրաժեշտ է մաքրել սելավատարները:
3.	Լեռնապատ	1, 4, 6, 11 փողոցներ, 2-րդ, 3-րդ, 7-րդ, 1-ին փողոցները միացնող հատվածներ	63 բնակելի տուն, մոտ 240 մարդ	Կառուցել սելավապաշտպան կառույցներ՝ ջրահեռացման ուղիներով
4.	Ազնվաձոր	Գյուղի կենտրոնում, գետակի եզրին	Գյուղի կենտրոնում, գյուղամիջյան ճանապարհի մոտ	Անհրաժեշտ է կամուրջ ծառայող խողովակի փոխարեն կառուցել կամուրջ:
5.	Դարպաս	Գյուղամեջ, Դարպաս-Վանաձոր ճանապարհ և կամուրջներ	Տներ և տնամերձի, կամուրջների հեղեղումներ, 60 տուն, 220 բնակչություն	Սելավակարգավորիչների մաքրում, առուների հունների խորացում
6.	Բազում	Համայնքով է հոսում «Բազում թառ» գետը և ափամերձ ողջ տարածքը վտանգավոր է բնակչության համար:	Վտանգավոր գոտում գտնվում է 15 տուն (82 բնակիչ), տները կամ տնամերձ հողամասերը գտնվում է գետին շատ մոտ:	Կառուցել հակահեղեղային կառույցներ
7.	Մարգահովիտ	Համայնքի տարածք	Գյուղի միջով հոսող առուների շրջակայքը	Սելավավտանգ գոտիներում առուների հունը մաքրել
8.	Շահումյան	«Ավազահանք» կոչվող թաղամաս «Տանձուտ» և «Ղարփի» գետերի ավազանում գերեզմանների տարածք, 2-րդ փողոցի սկզբնամասում	Սելավների և հեղեղումների ժամանակ հեղեղվում են տնամերձեր և նկուղները 44 առանձնատներ, 153 բնակիչներ	Մաքրել գետերի հունները, որոշ տեղերում գաբիոնապատել, ծառատունկ Համայնքի բյուջեից նախատեսված է 900.000 դրամ «Տանձուտ» գետի գաբիոնապատում
9.	Արջուտ	Միջգյուղական ճանապարհները, ամբողջ համայնքը	Ձորերի առկայությունը, ամբողջ համայնքը, 800 մարդ	Անտառատնկում, բնական հեղեղատարների մաքրում:
10.	Գուգարք	Սելավ և հեղեղում - 6-րդ և 10-րդ փողոցների վերջնամաս, գետակի ավազան	Գյուղի արևելյան մասի գառիթափերի անտառազուրկ տարածքի ջրերի արագահոսությունը բերում է սելավի և հեղեղումի: Խաչի թաղի հյուսիսային մասում պարբերաբար հոսքային ջրերի ակտիվացումը բերում է սողանքի: 42 բնակելի տուն, 168 բնակիչ	Ծառատունկ գառիթափերում, սելավատարի բետոնացում, դրենաժի կառուցում: Գետակի հենապատի կառուցում Սելավատարի հունի մաքրում Ջրահավաքի կառուցում

1	2	3	4	5
11.	Վահագնա- ծոր	Գ. Վահագնածոր Փամբակ գետի երկանքով	Շինությունների թիվը 8 Բնակչության թիվը 17	Փամբակ գետի հունի մաքրում, հենապատի տեղադրում
12.	Դեբեդ	Անձղահողեր, Խաչի գյուղ, Կապի տակ, Քարհանք, գետափնյա տներ և տնամերձ	Գետափնյա տներ և տնամերձ, 12 շենք, 7 շինություն, 25 բնակիչ	Գետի հունի ափապաշտպան պատնեշների կառուցում, գետի հունի մաքրում:
13.	Լերմոն- տովի	Վանածոր-Դիլիջան մայրուղի, վարչա- կան տարածք, «Բոլշոյ Կլյուչ» թաղա- մասը, գյուղի սկզբնամասը	շինություններ – 18, բնակչության թիվը – 70	Գետակների հունների մաքրում և պաշտպանական հենապատների կառուցում:
14.	Ֆիդետովո	Գյուղի հյուսիսային մասում	Վնասվում է գյուղամիջյան ճանապարհները: Վտանգավոր գոտում գտնվում են մոտ 70 տուն և 350 բնակիչ	Հանրապետական նշանակության ավտոմայրուղու կամուրջների ոչ ճիշտ տեղակայություն: Վերափոխել կամուրջները և կառուցել ջրահեռացման դրենաժներ
15.	Հալավար	1.գ. Լեռնաջուր, միջ. համայնքային ա/ճ 2.գ. Հալավար, միջ. համայնքային ճ-ի 3.համայնքի տարածքով հոսող գետին մոտ գտնվող տնամերձերը, շինությունները	1.Ճանապարհներ 2.Տնամերձ հողեր 3.Գետի մոտ գտնվող շենք, շինություններ	1.Հակահեղեղային կառույցների և սելավատար- ների հատվածների մաքրում 2.Մաքրել համայնքի տարածքով հոսող գետի հունը, վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցներ
16.	Եղեգնուտ	Գյուղի տարածքով հոսող առուների հունները	Գյուղի հոսող երկու առուները, որոնք գարնան ձնհալից և հորդառատ անձրևներից վարարում են, վտանգ հանդիսանալով ձորակների աջ և ձախ կողմում գտնվող տներին, անասնազոմերին: Շինությունները՝ 15-20, բնակչությանը՝ 60-65	Հաճախակի մաքրել նշված առուների հունները և ճանապարհների կամրջային անցումները
Տաշիրի տարածաշրջան				
17.	Տաշիր	Բնակավայրի մեջ Գետափնյա փողոց	Գետափնյա փողոցի աջ և ձախ մասերը, անհատական տներ և ավտոկայան, մոտ 800 բնակիչ	Տաշիր գետի պատնեշների վերանորոգում և ավելացում 6-ից 8-րդ թաղամաս
18.	Միխայ- լովկա	Գյուղի հյուսիսային մասում Գյուղի հարավային մասում Գյուղի կենտրոնական մասում	1. 20տներ, 60 բնակիչ 2. 50 տներ, 120 բնակիչ 3. 8 տներ, 20 բնակիչ	Գյուղի հարավային մասում անհրաժեշտ է վերակառուցել ջրատարը:
19.	Նորաշեն	«Բաբոյի գյուղ» թաղամաս	Թեք լանջային տեղամաս, գետի ոլորապտույտ հատված: Տների քանակը 52, բնակիչների թիվը 220	Արգելապատնեշի կառուցում
20.	Նովոսել- ցովի	Առանձնատների նկուղներ	10 առանձնատան նկուղներ, 25 անասնազոմ	Ջրի հունը փոխել
21.	Պաղաղբյուր	Գյուղամեջ	12 տուն, 48 բնակիչ	Կառուցել հեղեղատար

1	2	3	4	5
Թումանյանի տարածաշրջան				
22.	Ալավերդի	1. Մարտի 8-ի փողոցի սելավատար 2. Դեբեդ գետի հենապատի փլվածք 3. Դեբեդ գետի հեղեղում, Սանահին կայարան	1. Բ/2, ՊՏՈՒ – 400 մարդ 2. Թումանյան փողոցի տրանսպորտային երթևեկության վտանգ 3. 2 և 3 հարկանի բ/2 – 800 մարդ	1. Բերվածքների հեռացում, 2. Հենապատի ամրացում 3. Ափապաշտպան պատնեշի կառուցում
23.	Թումանյան	1-ին թաղ. նոր միկրոշրջան 2-րդ թաղ. 3-րդ թաղ.	1. Սելավատարի հիմքի քայքայում, բնակելի տուն N 2, N 3 (6 բնակիչ) և անասնազոմ 2. Սելավատարի հիմքի քայքայում, (խանութ, բաղնիք և անասնազոմ) 3. Սելավատարի հիմքի և (Թումանյան-Քարինջ) 6-հի հենապատի հիմքի քայքայում (բնակելի տուն 2 բնակիչ, փուռ և անասնազոմ	Առաջարկում ենք մաքրել, վերանորոգել ցեմենտ-բետոնե շաղախով սելավատարների հիմքերը և հենապատերը, իսկ հեղեղավտանգ տեղամասերում կառուցել նոր սելավատարներ: Համայնքի բյուջեից նախատեսված է 280000 դրամ
24.	Ախթալա	1. Ջրհեղեղ – Ախթալա կայարան, փ. Օրջոնիկիձե 1, 2 շենք 2. Սելավ – փ. Սպանդարյան, Թումանյան 7 շենք, Երկաթգիծ, Առաինյա	1. Ախթալա կայարան՝ Դեբեդ գետի ափամերձ տարածք – 5 շենք, 17 ննակիչ 2. Օրջոնիկիձե 1, 2 շենք, Ախթալա գետի ափամերձ տարածք – 2 շենք, 60 բնակիչ	1. Դեբեդ գետի ափամերձ պատնեշի կամ ափապաշտպան թմբի կառուցում 2. Ախթալա գետի (Օրջոնիկիձե 1,2 շենքի հարակից հատվածում) հունի մաքրում: Վարձատրվող հասարակական աշխատանքներ ծրագրով համայնքի ջրահեռացման համակարգերի մաքրում:
25.	Արդվի	Բողազ կոչվող հանդամասից մինչև Օծունի կից հողատարածք և համայնքի (գյուղի) ներսում, սկիզբը մոշուտ հանդամասից մինչև գյուղից դուրս ջրագծեր	Գյուղի ներսում 5 տուն, 4 գոմ, 10 տնամերձ, բնակվում է 16 մարդ.	1. Բողազ հանդամասից եկող ջրերի հեռացման համար կառուցել ոռոգվող ջրանցքի զուգահեռ ջրահեռացման մաս 40մ 500մմ խողովակով 2. Մոշուտ կոչվող տարածքում կառուցել դամբ և կատարել 50մ երկարությամբ հողային աշխատանք
26.	Թեղուտ	«Շնող» գետի ափամերձ սեփականաշնորհված հողամասեր	Վտանգավոր տեղամասում շենք և շինություններ չկան	Ամրացնել ափապատնեշը վտանգավոր գոտիներում, մաքրել գետի հունը և հնարավորության սահմաններում պատնեշել գետի ափամերձ գոտին՝ հեղեղման վտանգը կանխելու համար
27.	Շամուտ	Գյուղի ներսում գտնվող մի քանի տների մոտակայքում	Գյուղի ներսում հոսող գետակի և առվակների հարևանությամբ գտնվող շինությունները: 12 շինություն և 23 մարդ.	Կառուցել ամրություններ՝ սողանքի առաջը առնելու համար
28.	Շնող	1. Շնող գետի ափամերձ հատվածներ 2. «Խամհատ» և «Գոմերի ձոր» տարածքներում	18 շինություն, 48 մարդ.	Հեղեղատարների մաքրում

1	2	3	4	5
29.	Մեծ Այրում	Մեծ Այրում և Փոքր Այրում գյուղերը	Փոքր Այրումում 6-րդ փողոցի վրա գտնվող առանձնատները, բնակվում է 19 մարդ: Մեծ Այրումում 2-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ փողոցների առանձնատները, բնակվում է 60 մարդ	Անհրաժեշտ են ֆինանսական միջոցներ
Ստեփանավանի տարածաշրջան				
30.	Գարգառ	Գետի վրա կառուցված միջպետական ճ-հի կամուրջի փլուզման վտանգ: Գյուղի կենտրոնական մասում՝ գյուղապետարանի մոտ	Կամուրջից մոտ 8-10 մ հեռավորությամբ կառուցված է հենապատ, որը պահպանում է կամուրջի հիմքերը: Հենապատի հիմքը վարարումների պատճառով խարխլվել է և ենթակա է փլուզման	Ամրացնել հենապատի հիմքերը
31.	Վարդաբլուր	Գետի՝ աղմինիստրատիվ մասին հարակից տեղամաս	Գետի վտանգավոր տեղամասի ափերը պաշտպանված են ե/բ կոնցրետով ցիաներով, որն ունի կառուցման վաղեմություն	Վտանգավոր տեղամասում գետի հունը մաքրել ավազային նստվածքներից:
32.	Սվերդլով	1. Առուի շրջակայք 2. Գետի հունի շրջակայք	1. 13 շենք և 14 շինություն – 45 բնակիչ 2. 10 շենք և շինություն – 30 բնակիչ	Կանխարգելիչ պատնեշների կառուցում և վերանորոգում:
Սպիտակի տարածաշրջան				
33.	Սպիտակ	Այգեստան 1 թաղամաս	Քաղաքի արևելյան մասում, հին գերեզմանոցի տակը գետը լվացել է աջ ափը և կամրջի հիմքը, ինչը հանգեցրել է լանջի անկայուն զանգվածների հավասարակշռության խախտմանը և փլուզմանը, իսկ կամուրջը դարձրել է վթարային	Ծառատունկ, կամուրջի վերանորոգում
34.	Արևաշող	Գյուղամիջյան ճանապարհի երկարությամբ, ճանապարհի ձախ կողմում գտնվող բնակելի հարակից շենքեր և շինություններ	Կենտրոնական ճանապարհի ձախակողմյան բնակելի զանգվածը, որը գտնվում է ճանապարհից որոշակի ցածրության վրա, հորդառատ անձրևներից առաջացած հեղեղումները հոսում են ցած, թափվելով շենք և շինությունները: Շենք-շինություններ՝ 200 հատ, բնակչության թիվը՝ 750 մարդ	Կենտրոնական ճանապարհի երկու կողմից 3 կմ երկարությամբ առուների կառուցումը բետոնից և սելավատար խողովակների անցկացումը դեպի գյուղի ձախակողմյան ամբողջ երկարությամբ հոսող գետակը
35.	Գեղասար	Փամբակ գետի շրջակայքը, գյուղամիջյան կամուրջները,	Գետի շրջակայքում, որտեղ գտնվում են 15 տուն, 70 մարդ բնակչությամբ: Գյուղամիջյան կամուրջները, որոնք բոլոր բնակիչների համար դարձել են անանցանելի	Գետի շրջակայքում 600մ գաբիոնների տեղադրում և գետի հունի մաքրում: Գյուղամիջյան կամուրջների հիմնանորոգում:
36.	Շիրակամուտ	Չիչխանաձորի կամուրջ	Հիմնատակը ջուրը քայքայել է, կոնտակտները աշխատում են դեռ չքանդված փոքր մակերեսով հիմնատակով, վտանգ է ներկայացնում Շիրակամուտ-Գոգարան գնացող միջհամայնքային ավտոճանապարհին	Հիմքերի բետոնում, գաբիոնների տեղադրում և մաքրում

1	2	3	4	5
37.	Սարահարթ	Սարահարթ թիվ 14, 15, 16, 17 փողոցները	Վտանգավոր գոտում են գտնվում թիվ 14, 15, 16, 17 փողոցի 64 շենք, 82 շինություն, բնակչության թիվը 224	Ջրատար խողովակաշարերի կառուցում և ամրացում
38.	Լեռնավան	Գյուղի կենտրոնի ձորակ, լեռնալանջեր	Գյուղի կենտրոնի ձորակ: 85 շենք, դպրոց, գյուղապետարան, 800 մարդ	Ձորի մաքրում, կողեզրերի հիմնովի կառուցում:
39.	Ջրաշեն	Լեռնավան-Ջրաշեն-Սպիտակ հոսող առուն, Փամփաջուր-Ջրաշեն-Սպիտակ հոսող առուն (գերեզմանատան ճանապարհի սարալանջի մասը): Ջրաշեն-Երևան մայրուղու հարակից սողանքային հողեր	Առուների շրջակայքի բնակելի զանգվածները և գ.ն. հողատեսքեր շուրջ 350-400 բնակ. տներ և 200 հա հողատարածքներ, շուրջ – 1800 բնակիչներ	Առուների հունի մաքրում և խորացում, գյուղամիջյան ճամփեզրի ջրատար առուների մաքրում և նորոգումներ
40.	Սարամեջ	Սելավատարի ափամերձ շրջանները և միջհամայնքային ճանապարհները 34 մ	Սելավատարի ափամերձ շրջանները Շենքերը և շինությունները՝ 28, բնակչությունը՝ 138 մարդ	Ափամերձ շրջաններում պատնեշների կառուցում:
41.	Կաթնաջուր	Գյուղի տարածքը	Գյուղի հարավային մասի սարալանջերից առաջացող հեղեղները վտանգում են ամբողջ գյուղի տարածքը	Գյուղի հարավից հյուսիս ձգվող 2 սելավատարների մաքրում և արևմտյան մասի հեղեղատարի կառուցում:
42.	Լեռնանցք	Համայնքի կենտրոնով անցնող գետակի հարող տարածքներ (մոտ 10կմ)	Վտանգավոր գոտում գտնվում են շենքեր, նկուղներ, անասնագոմեր, սեփականաշնորհված հողամասեր, այգիներ, բանջարանոցներ	Գետի հունի մաքրում, գաբիոնների կառուցում և կամուրջների վերանորոգում:
43.	Ծաղկաբեր	Գյուղի հյուսիսային մասում՝ գետի հարակից տարածքը	Տեղամասը գտնվում է գետի հարակից տարածքում: Շուրջ 30 տներ, նկուղներով և մառաններով լցվում են ջրով: Տարածքում ապրում է շուրջ 120 մարդ	Գետի ափի վտանգավոր հատվածում արգելապատնեշի կառուցում մոտ 350 մ երկարությամբ
44.	Ղուրսալ	Փամբակ գետի ափամերձ տարածք	7 հա վարելահող և ջերմոց, օժանդակ շինություն	Հենապատի կառուցում
45.	Նոր Խաչակապ	Գետափ	Կամուրջ, երկաթգիծ	Գաբիոնապատել

10.1.4. Անտառային հրդեհներ

666. ՀՀ Լոռու մարզում անտառային հրդեհների հրդեհավտանգ ժամանակահատվածները որպես կանոն սկսվում են անտառածածկ տարածքների ձնածածկույթի հալման պահից մինչև լրիվ կանաչ խոտածածկույթի դուրս գալը, կամ աշնան անձրևային եղանակի սկսվելը: Դրանք սկսվում են մարտի կեսերից և ավարտվում են նոյեմբերին: Անտառային հրդեհները հաճախ բռնկվում են հրդեհաշիջման աշխատանքների իրականացման համար դժվարամատչելի և անանցանելի տեղանքներում: Հրդեհների բռնկման հիմնական պատճառներից է նաև այն հանգամանքը, որ անտառային տարածքներով են անցնում ընդհանուր օգտագործման ճանապարհներն ու արահետները և անտառներում հանգստանալ են ցանկանում մեծ քանակով մարդիկ, ովքեր հիմնականում չեն պաշտպանում հրդեհային անվտանգության կանոնները, ինչպես նաև տեղի են ունենում չոր խոտածածկույթի կանխամտածված հրկիզումներ, որոնց հետևանքով առաջանում են անտառային հրդեհներ: Հիմնականում անտառային հրդեհների տարածման պատճառներից կարող են հանդիսանալ բնակլիմայական պայմանները, բնակեցվածության ցածր խտությունը, կրակի օջախի ոչ ժամանակին հայտնաբերումը, հրդեհաշիջման ուժերի և միջոցների բացազատման ուշացումը

667. Մարզի Դսեղ, Ախթալա և Մեծ Պարնի համայնքներում անհրաժեշտ է ստեղծել հրշեջ հենակետեր տարածաշրջանի հրդեհներին արագ արձագանքելու համար:

10.2. ՏԵԽՆԱԾԻՆ ԱՂԵՏՆԵՐ

668. Մարզում տեխնածին բնույթի ԱԻ-ների առաջացման վտանգը պայմանավորված է արդյունաբերության, էներգետիկայի և կոմունալ տնտեսության մեջ պոտենցիալ վտանգ ներկայացնող արտադրության և տեխնոլոգիայի առկայությամբ: Վթարների առաջացման հնարավորությունը սրվում է արտադրական հիմնական ֆոնդերի մաշվածությամբ, համապատասխան վերանորոգման և պրոֆիլակտիկ աշխատանքների բացակայությամբ, տեխնոլոգիական և արտադրական կարգապահության անկմամբ:

669. Պետության կողմից ոչ բավարար ֆինանսավորումը և թույլ հսկողությունը վտանագավոր օբյեկտներում կարող են հանգեցնել տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների առաջացմանը: Այս իրավիճակներից խուսափելու համար անհրաժեշտ է բարձր մակարդակի վրա պահել կազմակերպությունների վերանորոգման բազան, բնակելի ֆոնդերը և կոմունալ-տնտեսական ցանցերը:

670. Անհրաժեշտ է ուժեղացնել և վերահսկել մարզում կառուցվող և վերակառուցվող օբյեկտների, կառուցապատման նախագծերի փորձաքննության ու եզրակացությունների կազմումը՝ ՔՊԻՏՄ նորմերի պահանջների ապահովման շրջանակներում: Իրականացնել մարզի տարածքում գտնվող քիմիապես վտանգավոր օբյեկտների և հիդրոտեխնիկական կառույցների անվտանգության վկայագրերի փորձաքննությունները:

671. Ալավերդու և Շամլուղի պղնձ-հրաքարային և Ախթալայի հարաքարային-բարիտ-բազմամետաղային հանքավայրերի արդյունահանումը ներկայում դադարեցված է, շահագործվում է միայն Շամլուղի հանքավայրը «Մեթալ Փրինս Էլ Թի Դի» կորպորացիայի կողմից: Հանքաքարը մշակվում է Ախթալայի լեռնա-հարստացուցիչ ֆաբրիկայում: Շամլուղի հանքավայրի տարածքի համար շրջակա միջավայրի պահպանման հարցը շատ խիստ է դրված: Տարածքը չափազանց աղտոտված է արդյունահանման թափոններով, տեղանքը

բազմաթիվ լեռնային փորվածքներով խիստ կտրտված է: Ներկայում շահագործողի, իչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների համար լուրջ հիմնախնդիր է վերամշակման թափոնների պահեստավորումը: Հին պոչամբարը, ինչպես ծավալներով այնպես էլ տեխնիկապես հնացել է և չի բավարարում ժամանակակից բնապահպանական պահանջներին: Բացի այդ մեծ մտահոգություն է պատճառում պոչամբարի պատվարի սեյսմակայունության գործոնը, քանի որ նա անցյալում նախագծվել ու կառուցվել է համաձայն հին նորմերի, այսինքն 7 բալանոց սեյսմիկ գոտու համար: Սակայն ըստ ներկայում գործող սեյսմիկ շրջանացման քարտեզի, տարածքը պատկանում է սեյսմիկ վտանգի գոտուն, որտեղ հավանական են 0,1-0,2g գրունտի հորիզոնական արագացումներ, կամ 8 բալ ուժգնության երկրաշարժեր (ըստ MSK-64 սանդղակի): Այս հանգամանքներից ելնելով անհրաժեշտ է Շամլուղի հանքավայրի տարածքի և ինժեներային կառույցների համար անցկացնել սեյսմիկ վերազնահատողական աշխատանքներ:

10.3 ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

672. Բնակչության պատսպարումը իրականացվում է ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում, շենքերի և բնակելի տների նկուղներում և այլ ստորգետնյա կառույցներում: Կատարված ստուգումները ցույց են տվել, որ մարզում առկա 33 ապաստարաններից և 28 հակաճառագայթային թաքստոցներից ոչ մեկը չեն կարող ծառայել նպատակին: Ապաստարաններից 9-ը ենթակա է դուրս գրման, 3-ը ենթակա է մասնակի վերանորոգման, իսկ 21-ը կապիտալ վերանորոգման և կահավորման: Մարզի բնակչության 88,6 %-ի (250.027 մարդ) պատսպարումը նախատեսվում է իրականացնել շենքերի և բնակելի տների նկուղներում, իսկ 11,4 %-ը (31.973 մարդ) պարզագույն թաքստոցներում և արագ կառուցվող շինություններում:

673. Մարզի պահեստային կառավարման կետը գտնվում է ոչ բարվոք վիճակում և ենթակա է կապիտալ վերանորոգման:

674. Մարզում բացակայում է կենտրոնացված ազդարարման համակարգը: Բնակչության ազդարարման համար պահանջվող 260 էլ. շջակներից առկա են 31-ը՝ 18 համայնքներում, որոնք անսարք են:

675. Նոր կառուցվող բոլոր տեսակի բազմաբնակարան բնակելի շենքերի և հիմնրակ-ձեռնարկությունների նկուղային հարկերում նախատեսել և կառուցել ապաստարաններ և թաքստոցներ:

676. Մարզում ճառագայթային և քիմիական պաշտպանությունը գտնվում է ոչ բավարար վիճակում, քանի որ առկա անհատական պաշտպանության միջոցները համաձայն լաբորատոր ստուգումների պիտանի չեն շահագործման, այսինքն դրանք ՀՀ կառավարության 25.10.2003թ. թիվ 679 որոշման հիման վրա, ըստ հաստատված կարգի կարող են օգտագործվել միայն ուսուցման նպատակով: